ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

# ՈՐՈՇՈՒՄ

26 Մայիս 2020, № 18. 3.3

## ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Հ. ԴՐՄԵՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ 01-SCI-2018 «ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԻ և ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՖԻԶԻԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՇՊՀ» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 6-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 2.2.6 ենթակետով՝ ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հարցը քննարկվել է ներբուհական դրամաշնորհի տրամադրման մրցույթին հաղթած 01-SCI-2018 թեմայի ֆինանսավորման, ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների քննարկման նպատակով ռեկտորի պարտականությունների կատարողի՝ 21.06.2018թ. N98 հրամանով ձևավորված հանձնաժողովի՝ 2020թ. մայիսի 11-ի թիվ 4 հեռավար նիստին:

Ներկայացված ամփոփիչ հաշվետվությունը ընդգրկում է թեմայի օրացույցային պլանի և առաջադրանքների բովանդակությունը ողջ ժամանակահատվածի համար:

Արդյունքում որոշվում է հաշվետվությունն ընդունել և միաժամանակ թեմայի իրականացման ընթացքում ներկայացված թվով 4-րդ ուղեցույցի վերաբերյալ երկրորդ կարծիքը ստանալուց հետո զբաղվել հետագա գործընթացով, ինչպես նաև խմբին հանձնարարել վերապատրաստման ծրագիր կազմել՝ թեմայի եռամսյակային պլանով ամրագրված հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ուսուցիչների հետ նախատեսված վերապատրաստումը, համավարակով պայմանավորված, առկա կամ հեռավար կերպով կազմակերպելու նպատակով:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԵՐ. ՍԵՐՈԲՅԱՆ